

**ՀՀ ֆինանսների նախարարություն  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/4**

**1 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Թամար Սեդրակյանի 03.06.2014 թ-ի դիմումումով բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 08.04.2014 թ-ի թիվ 218 որոշման դեմ:

**Քաղաքացի Թամար Սեդրակյանի գանգատում բերված փաստարկները.**

քաղաքացի Թամար Սեդրակյանը մինչև 2006 թվականը ՊԵԿ Արմավիրի տարածքային հարկային տեսչությունում հաշվատված է եղել որպես անհատ ձեռնարկատեր: 2006 թ-ին դադարեցրել է իր գործունեությունը, որի մասին դիմում է ներկայացրել տեսչություն:

29.05.2014 թ-ին տեսչությունից ստացվել է 08.04.2014 թ-ին կայացված թիվ 218 որոշումը, որով հաշվարկվել է 2009-2014 թվականներին պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով չկատարած հարկային պարտավորություն 373.980 դրամի չափով, որից ապառք՝ 133.080 դրամ և հաշվարկված տյուժ՝ 240.900 դրամ: Որոշմամբ վկայակոչված է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ուժը կորցրած ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ կետը և 6-րդ հոդվածի 5-րդ կետը:

02.06.2013 թ-ին Թամար Սեդրակյանն այցելել է Արմավիրի ՏՀՏ և խնդրել է իրեն ծանոթացնեն իրականացված վարչական վարույթի նյութերին ու տրամադրեն ակտը, որով իր վրա հաշվարկվել է չկատարված հարկային պարտավորություններ:

Խնդրանքը մերժվել է այն հիմնավորմամբ, որ իրավունք չունեն այդ փաստաթղթերին ծանոթացնել և ակտի օրինակը տրամադրել:

Քաղաքացի Թամար Սեդրակյանը գտնում է, որ վերոգրյալ որոշումը անօրինական է և պետք է անվավեր ճանաչվի հետևյալ պատճառաբանությամբ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով թվարկված են Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկատեսակները և պարտադիր սոցիալական ապահովության վճարն այդ շարքում որպես հարկատեսակ թվարկված չէ:

Եթե սոցիալական վճարները դիտվել են որպես հարկատեսակ, ապա պետք է կիրառվեր նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, ըստ որի. «Որևէ տեղեկություն հիմք չի հանդիսանում հարկ վճարողի հարկային պարտավորության հաշվարկման և գանձման համար, քանի դեռ նա հնարավորություն չի ունեցել ծանոթանալ դրան և տալ համապատասխան բացատրություն»:

2006 թ-ից Թամար Սեդրակյանը հարկային մարմնին Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով որևէ հայտարարագիր չի ներկայացրել և հարկային մարմնին իր նկատմամբ որևէ տույժ չի կիրառել, ինչը վկայում է այն մասին, որ իր կողմից 2006 թ-ին հայտարարություն է ներկայացվել գործունեությունը դադարեցնելու մասին: Հետևաբար, հարկային կամ այլ պարտավորություն չէր կարող առաջանալ:

Եթե խոսքը գնում է հարկային կամ սոց. վճարների պարտավորությունների մասին, ապա կիրառել են «Հարկերի մասին» օրենքի 30.1 հոդվածի և Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի դրույթները:

Տվյալ դեպքում, եթե խախտումը վերաբերում է 2009-2014 թվականներին, ապա 2009-2011 թ-ի համար վճարման պարտականություններ չեն կարող առաջանալ, քանի որ անցել է երեք տարվա վաղեմությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Թամար Սեդրակյանը խնդրում է ոչ իրավաչափ լինելու հիմքով անվավեր ճանաչել Արմավիրի ՏՀՏ 08.04.2014 թ-ի թիվ 218 որոշումը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

« ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Թամար Սեդրակյանը հաշվառվել է Արմավիրի ՏՀՏ-ում 2002 թ-ից: Ա/Ձ Թամար Սեդրակյանի գործունեությունը դադարեցվել է (լուծարվել է) 12.12.2012 թ-ին:

Նշվեց նաև, որ 07.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Թամար Սեդրակյանի պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ կազմել է 373.980 դրամ, որն ամբողջությամբ կազմված է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարից, ինչպես նաև նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով հաշվարկված տույժերից:

Ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ-ի պետի կողմից 08.04.2014 թ-ին կայացվել է թիվ 218 որոշումը (այսուհետ նաև Որոշում) չկատարված պարտավորությունները գանձելու վերաբերյալ: Որոշումը Թամար Սեդրակյանին ուղարկվել է փոստային ծառայության միջոցով 09.04.2014 թ-ին: Որոշումը պարունակող ծրարը փոստային ծառայության կողմից հետ է վերադարձվել «ՀՀ-ից բացակայում է գրառմամբ»: Արմավիրի ՏՀՏ-ի կողմից Թամար Սեդրակյանի փաստացի գտնվելու կամ հաշվառման վայրի վերաբերյալ համապատասխան հարցումներ են կատարվել ինչպես Արմավիրի քաղաքապետարանին, այնպես էլ ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ին: ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ից ստացված տեղեկանքի համաձայն Թամար Սեդրակյանն իր հաշվառման վայրի հաշվառումից հանվել է 27.09.2012 թ-ին և փաստացի բնակվում է ք.Երևան, Նոր-Նորք 8 զանգված 27 շենք 24 բնակարան հասցեում:

Որոշումը Թամար Սեդրակյանին ևս մեկ անգամ ուղարկվել է ք.Երևան, Նոր-Նորք 8 զանգված 27 շենք 24 հասցեով, որը նրա կողմից ստացվել է 29.05.2014 թ-ին:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Վերոգրյալից հետևում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Թամար Սեդրակյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Գանգատում բերված այն պնդումը, որ Թամար Սեդրակյանը գործունեությունը դադարեցրել է 2006 թ-ին, որի մասին դիմում է ներկայացրել տեսչությանը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ գործում առկա ապացույցների համաձայն, նրա կողմից մինչև 2006 թ-ի 4-րդ եռամսյակն ընկած ժամանակաշրջանի համար Արմավիրի ՏՀՏ են ներկայացվել պարզեցված հարկի հաշվարկներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրեր: Իսկ 2007 թ-ի հունվարի 1-ից մինչև 2008 թ-ի 3-րդ եռամսյակն ընկած հաշվետու ժամանակաշրջանի համար Արմավիրի ՏՀՏ են ներկայացվել գործունեություն



չիրականացնելու, ինչպես նաև հարկվող օբյեկտ հանդիսացող գույք չունենալու մասին հայտարարություններ:

ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ ներկայացուցիչը նշեց, որ 02.06.2014 թ-ին Թամար Սեդրակյանը ներկայացել է Արմավիրի ՏՀՏ և խնդրել է (բանավոր կարգով) իրեն ծանոթացնել իր գործով իրականացված վարչական վարույթի նյութերին և տրամադրել ակտը, որով իր վրա հաշվարկվել է չկատարված հարկային պարտավորություն: Իրավաբանական բաժնում նրան ծանոթացրել են վարչական վարույթի նյութերին, ինչպես նաև բացատրել, որ իր պարտավորությունները հաշվարկվել են պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով, ինչպես նաև, որ դրանք հաշվարկվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով և 6-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով (այլ ոչ թե ստուգման արդյունքում):

Ինչ վերաբերվում է գանգատում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին կատարված հղմանը, համաձայն որի պարտադիր սոցիալական ապահովության վճարը որպես հարկատեսակ նշված հոդվածում թվարկված չէ, ապա հարկ է նշել հետևյալը:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում նշված են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները: Դրանք են՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերը, տուրքերը և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները, ինչպես նաև դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը և տուգանքները:

Գանգատում բերված այն պնդման վերաբերյալ, որ կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները, նշվեց, որ այն անհիմն է, քանի որ պարտավորությունները հաշվարկվել են ոչ թե որևէ տեղեկության հիման վրա, այլ՝ հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Իրականությանը չի համապատասխանում նաև գանգատում բերված պնդումն այն մասին, որ գանգատաբերի կողմից 2006 թ-ից պարտադիր սոցիալական ապահովության վճարի հայտարարագիր չի ներկայացրվել: Մասնավորապես, Թամար Սեդրակյանի կողմից 13.08.2008 թ-ին (սահմանված ժամկետի ուշացումով) Արմավիրի ՏՀՏ են ներկայացվել պարտադիր սոցիալական ապահովության վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրերը 2006 թ-ի և 2007 թ-ի հաշվետու ժամանակաշրջանների համար:

Ինչ վերաբերում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածով սահմանված դրույթները կիրառելու վերաբերյալ գանգատում բերված պահանջին, ապա նշված դրույթը վերաբերում է հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելուն: Քննարկվող դեպքում հարկային մարմնի կողմից սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունները ոչ թե ինչ որ ժամանակահատվածում հայտնաբերվել են, այլ՝ հաշվարկվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 08.04.2014 թ-ի թիվ 218 որոշումը թողնել անփոփոխ: Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տևտեսակարար սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

**Հանձնաժողովի նախագահի ժ/պ**

**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**

